ԲԱՆԱՎԵՃ ДИСКУССИИ

III ԴԱՐՈՒՄ ՄԵԾ ՀԱՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ՎԱՐԿԱԾԸ

Բանասիր.գիտ. դոկտոր Ա. Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Մեծ Հայքի միասնական թագավորության տրոհման վերաբերյալ առաջադրվել է նոր վարկած, ըստ որի «363 թ. Հովհաննոսի ամոթալի դաշնագիրը և 384—87 թթ. Մեծ Հայքի թագավորության բաժանումը երկու մարտնչող աշխարհակալությունների միջև կրկնությունն էր ավելի վաղ ժամանակներում (244—253 թթ.) նման պատմական պայմաններում տեղի ունեցած դեպքերի»[1]։

Այդպես ուրեմն, Մեծ Հայքի միասնական թագավորությունը տրոհվել է ոչ թե 387 թ., այլ շուրջ մեկուկես դար ավելի վաղ։ «Հայ ժողովրդի պատմության» մեջ III դարի մասին գրեթե ամբողջ շարադրանքը հյուսված է այս վարկածի շուրջ[2]։ *Բայց դրություն ունեցող սկզբնաղբյուրները և նորագյուտ բնաբերի տվյալները նման հետևության չեն բերում։*

Արտաշիր Պապականը երեք հակատամարտերում հաղթանակ տարավ Արտավանի՝ Արշակունի վերջին արքայի դեմ և հաստատեց Սասանյան տիրապետությունը։ Դա տեղի ունեցավ 227 թ.։ Նոր դինաստիայի հիմնադիրն իրեն ղգում էր Աքեմենյանների ժառանգորդ և փորձեց վերականգնել աքեմենյան աշխարհակալության սահմանները։ Առաջին փորձերը, սակայն, շուրջ մեկուկես տասնամյակ, ոչինչ չեն տալիս։ Միջագետքում և Հայաստանում նա ուժեղ դիմադրության է հանդիպում։ 238 թ. պարսիկները սորից են մտնում Միջագետք։ Նրանց գիմաորավում է Գորդիանոս III կայսրը։ Նա Արեելք է գալիս 242 թ. և ռազմական գործողություններ ծավալում Շապուհ I-ի դեմ։ Գորդիանոսը վերագրավելով Միջագետքը շարժվում է Տիգրոն։ 244 թ. սկզբին երկու բանակները բախվում են Միսիխեսի մոտ։ Գորդիանոսը սպանվում է։ Նոր կայսր հռչակված Փիլիպոս Արաբը դիմում է հաշտության և վճարում 5000 դինար։

Աղբյուրները մեզ հաղորդում են այսքանը։

«Ավելի՛ն,—գրում է Ս. Տ. Երեմյանը,—ինչպես նշում են Զոնարասը և Եվագրիոսը, կայսրը ոչ միայն ռազմատուգանք է վճարում, այլև Շապուհ Ա-ի հետ կնքում է խաղաղության պայմանագիր, դիջելով պարսիկներին Հայաստանի մեծ մասը։ Զոսիմոսն այդ պայմանագիրը բնորոշում է իբրև «ամենաամոթաբեր հաշտություն»[3]։

Զոնարասից և Եվագրիոսից նման եզրակացության չի կարելի հանգել։ Այդ մասին հարկ չէր երկրորդելու[4]։ *Բայց ա՞ռ Զոսիմոսի վկայությունը. «Շատ ժամանակ անցնելուց հետո,—գրում է նա,—Գորդիանոսը պատերազմեց պարսից թագավորի դեմ և պատերազմի ընթացքում սպանվեց, սակայն նաև այս հաղթանակից հետո պարսիկները ոչ մի բան չդրավեցին հռոմեացիների հպատակության տակ եղողներից։ Բայց երբ Փիլիպոսն իշխանության գլուխ անցավ՝ նա պարսիկների հետ կնքեց ամենաամոթաբեր հաշտությունը»*[5]։

---

[1] Ս. Տ. Երեմյան. Մեծ Հայքի թագավորության բաժանումը Սասանյան Իրանի և Հռոմեական կայսրության միջև (244—253 թթ.).—«Պատմա-բանասիրական հանդես» (ՊԲՀ), 1976, № 1, էջ 67։

[2] Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն» (այսուհետև՝ ՀԺՊ), հ. II (բաժին Ա, գլ. 1—3, հեղինակ՝ Ս. Տ. Երեմյան), Երևան, 1984, էջ 21—80։

[3] Նույն տեղում, էջ 36։

[4] Տե՛ս Ա. Ա. Մարտիրոսյան. Սասանյանների արևմտյան նվաճումները և Հայաստանը.—ՊԲՀ, 1977. № 1, էջ 195—206։

[5] Zosimos, III, 32. 4. Տե՛ս Հ. Մանանդյան. Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության. հ. Բ, Երևան, 1957, էջ 83։

Ինչպես տեսնում ենք, խոսքը վերաբերում է միայն Հռոմի հպատակության տակ եղած երկրներին, և եթե կայսրը որևէ զիջում արել է, որ դիտվում է ամենաամոթաբեր, ապա միայն այդ երկրների հաշվին, իսկ Հայաստանը Հռոմի հպատակության տակ չէր։

«Գրեթե միակ գրավոր աղբյուրը,—նկատում է Երեմյանը,—որ ժամանակով մոտ է այս դեպքերին, «Քաաբա ի Զարդաշտի» արձանագրությունն է»[6]։ Այո, բայց այդ արձանագրությունն էլ ոչ մի հիմք չի տալիս։ Արձանագրությունը փորագրված է Շապուհ I-ի կողմից 262 թ. և պատմում է նրա երեք մեծ հաղթանակների մասին. Միսիխեսի մոտ, Բարբալիսոսի տակ և Խառանի ու Եդեսիայի միջև։ Խոսքն առաջին արշավանքի մասին է. «Ասորեստանի սահմանի վրա, Միսիխեսի մոտ մի մեծ ճակատամարտ տեղի ունեցավ,—ասված է արձանագրության մեջ,—Գորդիանոս կայսրը սպանվեց։ Հռոմեական ուժերը ջարդվեցին, և հռոմեացիները Փիլիպոսին դարձրին կայսր։ Ապա Փիլիպոսը եկավ մեզ մոտ հաշտություն խնդրելու և տվեց 5000 դինար փրկագին իր ընկերների կյանքի դիմաց և դարձավ մեզ հարկատու»[7]։

Տերիտորիալ նվաճումների մասին ոչ մի խոսք։ Եթե Հայաստանը կամ հռոմեական Միջագետքը զիջված լիներ պարսիկներին, Շապուհը, որ անտեղի պարծանքով նշում է, թե Հռոմը իրեն հարկատու դարձավ, անշուշտ դա չէր մոռանա, ինչպես մյուս դեպքերում։ Միսիխեսի հաղթանակով Շապուհը առանձնապես մեծ արդյունքի չի հասել։

Հաշտության պայմանագրի և նրա կիրառման խնդրին Ս. Տ. Երեմյանն անդրադառնում է մի քանի անգամ, և ոչ մեկը չի բռնում մյուսին։ Հոդվածում նա կարծիք է հայտնում, որ Հայաստանը նախապես նվաճված էր, և կայսրը միայն վավերացրեց այդ. «Ինչպես երևում է,—գրում է պատմաբանը,—Շապուհ I-ի զորքերը գրավել են Մեծ Հայքի թագավորության մեծ մասը, և Փիլիպոս Արաբը հարկադրված պիտի ճանաչեր ստեղծված իրադրությունը»[8]։ ՀԺՊ-ում, սակայն, նա գտնում է, որ Հայաստանը չէր նվաճված, և կայսրը պայմանագրով այն հանձնեց պարսիկներին[9]։ Մեկ պարբերություն հետո նույն ՀԺՊ-ի հաջորդ էջում Ս. Տ. Երեմյանը գրում է, որ երբ Շապուհ I-ը զբաղված էր Քուշանշահրի թագավորության հնդկա-պարթևական մասի նվաճումով, «խոսրով Մեծ-Տրդատ Բ-ն վերջին ճիգերն էր գործադրում նվաճողների լծից իր երկիրն ազատագրելու համար»[10]։

Շապուհ I-ը Քուշանշահր գնաց 244 թ. հաշտության պայմանագրից հետո, իսկ Տրդատ II-ը գահազրկվեց 253 թ., նշանակում է այդ շրջանում Հայաստանը նվաճված էր, և Տրդատ II-ը վերջին ճիգերն էր գործադրում այն ազատագրելու։ ՀԺՊ-ի 36-րդ էջի համաձայն՝ 244 թ. պայմանագիրը մինչև 253 թ. մնացել էր թղթի վրա, և Մեծ Հայքի թագավորությունը պահպանվել էր նախկին վիճակում։ Իսկ նույն ՀԺՊ-ի 38-րդ էջում գրված է. «Փիլիպոս կայսեր մահվան նախօրյակին հայոց թագավորը, ըստ Խորենացու, կայսեր հրամանով ռազմական օգնություն է ստացել հռոմեացիների դաշնակիցներից, որով և խախտվել է 244 թ. խաղաղության պայմանագիրը»։

Փիլիպոս Արաբը մեռել է 249 թ.։ Ուրեմն խաղաղության պայմանագիրը թղթի վրա չի մնացել, այլ ուժի մեջ է եղել մինչև 249 թ., այսինքն՝ մինչ այդ Հայաստանը եղել է պարսիկների իշխանության տակ։

Վերջապես ի՞նչ է տեղի ունեցել. պայմանագրից առաջ երկիրը արդեն նվաճվա՞ծ էր, թե՞ պայմանագրով տրվեց պարսիկներին, Հայաստանի մասին պայմանագրի կետը կիրառվե՞լ է, թե՞ մնացել թղթի վրա, պայմանագիրը գործել է մինչև 249 թ., թե՞ 253 թ. հետո միայն։

«Աղբյուրների վկայություններից պարզ երևում է սակայն, որ Հայաստանը չէր նվաճված Սասանյան Պարսկաստանի կողմից ո՛չ Փիլիպոս Արաբացու և ո՛չ էլ նրա հաջորդի՝ Դեկոսի ժամանակ (249—251)։ Նա իր անկախությունը պահպանել էր մինչև Գալլոս կայսեր (251—253) ժամանակը»[11]։ Մենք այս քաղվածքը բերեցինք Մանանդյանից իբրև խնդրի ամփոփում, բայց, տարօրինակաբար, այս քաղվածքը բերել է նաև Ս. Տ. Երեմյանը և համաձայնել դրան։

---

6 ՀԺՊ, էջ 35։

7 M. Sprengling. Third Century Iran, Sapor and Kartir. Chicago, 1953, p. 15

8 ՊԲՀ, 1976, № 1, էջ 73։

9 ՀԺՊ, էջ 36։

10 ՀԺՊ, էջ 37։

11 Մ. Մանանդյան. նշվ. աշխ., էջ 84։ Ս. Տ. Երեմյանը մի ուրիշ տեղ Մանանդյանից բերում է նույն քաղվածքը և մերժում այն (տե՛ս ՊԲՀ, 1966, № 2, էջ 62)։

Միայն բաց է թողել առաջին արտահայտությունը. «Աղբյուրների վկայություններից պարզ երևում էր, թերևս որովհետև հենց այստեղ դա պարզ չի երևում»։

Իսկ ի՞նչ տեղի ունեցավ 253 թ. Գալլոս կայսեր ժամանակ և հետո։ Անհրաժեշտ է այստեղ անդրադառնալ մի կարևոր խնդրի, որ և պայմանավորում է հետագա իրադարձությունների ընթացքը։

Տրդատ II-ը ՀԺՊ-ում հանդես է գալիս որպես «Խոսրով Մեծ-Տիրան-Տրդատ Բ»։ Ի՞նչ է նշանակում այդ անսովոր հորջորջումը։ Պատմիչների մոտ կա անձնանունների որոշ անհամաձայնություն, հատկապես III—IV դդ. համար։ Այսպես, III դարի առաջին կեսերի հայոց գահակալի անունը Զոնարասի մոտ Տրդատ է, իսկ հայ պատմագրության մեջ (Խորենացի, Ագաթանգեղոս)՝ Խոսրով. Բուզանդը պատմում է IV դարի կեսերին Տիրան թագավորի հետ առնչված մի իրադարձություն, որ վերաբերում է Տրդատ III-ին և այլն։ Այդ հանգամանքը խանգարում է իրադարձությունների ընթացքը հիշտ որոշելուն, և պատմա-բանասիրության մեջ խնդրի լուծման տարբեր փորձեր են եղել։

1944 թ. Հ. Պերպերյանը նկատեց, որ Խոսրովը պարսից մոտ պատվանուն է, տիտղոս։ Պարսկերեն Խոսրով նշանակում է «բարեհամբավ, հռչակավոր, անվանի»[13]. 1947 թվականին Կ. Մելիք-Օհանջանյանը «Տիրան-Տրդատի վեպը» ըստ Փավստոս Բուզանդի» հոդվածում նկատում է, որ IV դարի Արշակունի գահակալ Տիրանը՝ Խոսրով Կոտակի որդին, միաժամանակ կոչվել է և Տրդատ՝ Տիրան-Տրդատ[14]։ Այդպիսով Տրդատը հանդես է գալիս Լեռակի անձնավորումով՝ Տիրան, Տրդատ, Խոսրով։ Եվ Խոսրով-Տիրան-Տրդատ միակցությամբ ստեղծվում է առաձգական մի շրջագիծ, որի մեջ կարելի է տեղակայել ցանկացած իրադրություն և սյուժե։ Եվ տեղակայվել է։

Զոնարասը գրում է, որ Գալլոս կայսեր ժամանակ Հայաստանում տեղի է ունենում ինչ-որ խլրատում, Տրդատ թագավորը փախչում է, իսկ նրա որդիները հարում են պարսից[15]։ Ագաթանգեղոսը և Խորենացին պատմում են, թե ինչպես դավադրաբար սպանվում է Խոսրով թագավորը, իսկ նրա մանկահասակ որդուն փախցնում են հունաց կողմերը[16]։ Խորենացին գրում է մի Տիրան թագավորի մասին, որ գնաց Եկեղյաց գավառ և արքունիքը հաստատեց Զրմես ավանում[17]։

ՀԺՊ բառմահատորյակում հյուսվում է մի սյուժե, որի կրողը այս երեք թագավորներն են, միակցված գծիկով՝ Խոսրով Մեծ-Տիրան-Տրդատ II, իսկ լեյտմոտիվը՝ Մեծ Հայքի բաժանումը Հռոմի և Պարսկաստանի միջև։ Այսպես։ 253 թ. Խոսրով Մեծ-Տիրան-Տրդատ II-ը փախչում է հունաց կողմերը։ Նա հաստատվում է Զրմես ավանում և թագավորում Հայաստանի հռոմեական հատվածում մինչև 256 թ.։ 256 թ. նրան դավադրաբար սպանում է Պարթև Անակը։

Բայց ի՞նչ ընդհանուր բան կա այս Խոսրով, Տիրան և Տրդատ թագավորների միջև։

Տրդատ II-ը իշխել է 216 թ. և գահից հրաժարեցվել 253 թ. ինչ-որ խարդավանքով, որին մասնակից էին նրա որդիները։ Նա իր գահակալության ամբողջ ընթացքում անզիջում պայքարի մեջ էր Սասանյանների դեմ, որ վկայում են հայ և օտար աղբյուրները։

Տիրան թագավորը Արտաշեսի որդին էր և Արտավազդ շղթայակիր թագավորի եղբայրը, ուրեմն՝ շատ հեռու Սասանյան ժամանակներից, երբ գործել է Տրդատ II-ը։ «Սրա մասին ոչ մի քաջության գործ չի պատմվում» («Սորա ոչինչ պատմին գործք մեծամեծք»),—գրում է Խորենացին,—նա խաղաղությամբ վարեց իր թագավորությունը քսան և մի տարի և մեռավ ճանապարհին՝ ձյան հյուսքի տակ մնալով («Ի հանդարտութեան վարեալ զթագաւորութիւնն ամս քսան և մի և մեռաւ ի ճանապարհի ձեան հիւսոյ կալեալս»)[18]։

Խոսրով Մեծը Տրդատ III-ի հայրն է, նա պայքարում էր պարսից դեմ, սպանվեց իր եղբայրների կողմից, ինչպես վկայում է Եղիշեն, կամ՝ Պարթև Անակի, ինչպես վկայում է Ագաթանգեղոսը։

---

12 Հ. Պերպերյան. Որմիզդ-Արտաշիր մեծ արքա Հայաստանի.—«Զվարթնոց», II, 1944, էջ 167—173։

13 Հ. Աճառյան. Հայոց անձնանունների բառարան. Բ, Երևան, 1944, էջ 529—530։

14 Կ. Մելիք-Օհանջանյան. Տիրան-Տրդատի վեպը ըստ Փավստոս Բուզանդի.— ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1947, № 6, էջ 60—63։

15 Zonaras. XII, 21 (ed. Dindorf. vol. III. Lipsiae, 1870, p. 137).

16 Ագաթանգեղոս, Հ, 26—36։ Մովսես Խորենացի, Բ, հդ, հզ։

17 Մովսես Խորենացի, Բ, կբ։

18 Նույն տեղում։

Այդպես, Տրդատ II-ը, որ անվերջ պայքարի մեջ էր պարսից դեմ և իր քաղաքական կյանքը ավարտեց որդիների խարդավանքով, միանձնավորվում է Տիրան թագավորի հետ, որ «եկեաց ավարտեց որդիների խարդավանքով, միանձնավորվում է Տիրան թագավորի հետ, որ «եկեաց խաղաղութեամբ որսոց ե զրոսանաց պարապեալ»՝ «ապրեց խաղաղության մեջ որսով և զբոսանքով տարված» ու մեռավ ձնահյուսքից և Խոսրով II-ի հետ, որ սպանվեց եղբոր կողմից և որի որդուն փախցրին հունաց կողմերը։ «Երեք անձինք և մի բնութիւն»,—այստեղ կարելի է դա լրիվ շրջափոխել. «երեք բնութիւնք և մի անձն»։ Եվ այն գծիկով, որով միացվել են հայոց թագավորները, բաժանվել է հայոց թագավորությունը։

Քանի որ Տիրանը Տրդատն էր, ապա ուրեմն նա իր արքունիքը հաստատել է Զրմես ավանում, նշանակում է Հայաստանը բաժանվել է երկու՝ արևելյան՝ պարսկական և արևմտյան՝ հռոմեական մասերի։ Տրդատը փախուստ տալով թագավորել է արևմտյան հատվածում։ Իսկ բաժանման ակտը տեղի է ունեցել 244-ին, բայց իրականացել է 253-ին։ Այդպիսով Մեծ Հայքի միասնական թագավորությունը առաջին անգամ դադարել է գոյություն ունենալուց ոչ թե 387 թ., այլ 244, մեկուկես հարյուրամյակից ավելի վաղ։ Ահա թե ինչ է ստացվում Խոսրով Մեծ-Տիրան-Տրդատ միությունից։ Փորձենք ներկայացնել այդ խնդիրը. «Հայկական էպոսում ըստ երևույթին «Խոսրով» անունը դարձել է հոմանիշ «հայոց թագավոր» հասկացությանը,—գրում է Ս. Տ. Երեմյանը և նույն էջում «հայկական էպոս» արտահայտության փոխարեն գործածում «հայկական պատմական ավանդություն»[19]։ Հայկական էպոսն ամենևին հարկ չկա նույնացնելու հայկական պատմական ավանդության հետ։ Բայց խնդիրն այդ չէ։ «Խոսրով»՝ իբրև պատվանուն կամ հոմանիշ «հայոց թագավոր» հասկացությանը, Երբեք չի հնչել ո՛չ հայկական էպոսում և ո՛չ հայկական պատմական ավանդության մեջ։ Այն, ուղղակի, հաճախ հանդիպող անուն է հայ Արշակունյաց արքայացանկում և հատուկ ու ընտանի հենց հայ Արշակունիներին։

Աքեմենյան, ինչպես և Արշակունյան դինաստիայում «Խոսրով» արքա չի նշված, միայն, երբ Արշակունիները մոտենում էին իրենց վերջնագծին, գահին երևաց մի Խոսրով, որ գործել է II դարի սկզբներին, Տրդատոս կայսեր ժամանակներում։ Դժվար է ասել, Աքեմենյանների, ինչպես և Արշակունիների օրոք «Խոսրով» հնչե՞լ է որպես պատվանուն կամ տիտղոս։ Որևէ տվյալ չկա, բայց պարզ է, որ բառիմաստը գիտակցվել է իբրև ածական և դեռ անձնանվան չի վերածվել։ Սասանյանների մոտ, սակայն, կարելի է ասել, որ հենց սկզբից «Խոսրով» տիտղոս է։ Այդ է վկայում Քաաբա ի Զարդուշտի պատերին փորագրված Շապուհի արձանագրությունը, և նրանք նույնպես մինչև դինաստիայի վերջնագիծը «Խոսրով» անձնանուն չունեն։ Երեք դար հետո միայն Սասանյան գահին բազմել են Խոսրովներ՝ Խոսրով I (531—579), Խոսրով II (591—628) և Խոսրով III (630—632)։

Ինչպես տեսնում ենք, պարսից Արշակունիների և Սասանյանների մոտ «Խոսրով» անունը և տիտղոսը երբեք չեն զուգամիտվում իրար։ Երկու դեպքում էլ այն նախապես պատվանուն է, տիտղոս, ապա վերաճում է անվան։ Եվ դա բնական է։ Միևնույն բառը նույն միջավայրում միաժամանակ չի կարող կիրառվել և՛ իբրև անուն և՛ իբրև տիտղոս։ «Իշխան» կամ «Թագավոր» անունները հաճախ կարելի է տեսնել հայ անվանացանկում, բայց Իշխան կամ Թագավոր իբրև անուն կարող են տալ նրանց, ովքեր իշխան կամ թագավոր չեն։ Այլապես կառաջացներ անպատեհություն։ Ինչպե՞ս կոչել իշխանին Իշխան, երբ նա ինքնին իշխան է։ Թագավորին՝ Թագավոր, երբ նա արդեն թագավոր է։ Եվ երբ Սասանյան արքայացանկի մեջ երևան եկավ Խոսրով անունը, այն դադարեց տիտղոս լինելուց։

Հայ Արշակունիների կողմից Խոսրով անվան կիրառումը համընկնում է առաջին Սասանյանների շրջանին, որոնց մոտ «Խոսրովը» տիտղոս է։ Այդ զուգահեռականությունն է տեղիք տվել Ս. Տ. Երեմյանին սահմանելու՝ «Խոսրովը ոչ միայն անուն է, այլև՝ տիտղոս», որը ճիշտ չէ։ Սասանյանները նոր էին բարձրացել իշխանություն։ Նրանք Արշակունիներին դուրս վանեցին քաղաքական պատմությունից և բերում էին իրենց ավանդությունը, որը կարող էր չկապվել Արշակունիների հետ, իսկ հայ գահակալներն իրենք Արշակունի էին և նրանց հետ կրում էին միևնույն ավանդությունը։ «Խոսրովը» Սասանյան ավանդությամբ տիտղոս էր, Արշակունյաց ավանդությամբ՝ անուն, այսինքն՝ մի տեղ անուն է, մի այլ տեղ տիտղոս։ Մենք տեսանք, որ պարսից Արշակունիների արքայացանկում II դարի սկզբին նշված է Խոսրով արքա, և «Խոսրով» իբրև անուն շարունակեց արտահայտվել հայ Արշակունիների մոտ և III դարում դարձավ ընդհանուր ու ընտանի։

---

19 ՀԺՊ, էջ 25։

Թերեւ քաղաքում գտնվել է մի հունարեն արձանագրություն, ուր կարդացվում է. «Խոսրով հայ, տեսեալ զարմացայ»[20]։ Արձանագրությունը թվագրվում է II—III դդ. և ենթադրվում է, որ դա Խոսրով I-ն է[21]։ Բայց ինչ էլ լինի՝ «Խոսրովն» այստեղ անձնանուն է։ Խոսրով I-ի գահակալությունը թվագրվում է 198-ից մինչև 216։ Նրա մասին հաղորդում է Խորենացին, և դա ո՞ր «հայկական պատմական ավանդություն» է և ո՞ր «հայկական էպոս»։ Խորենացին իր տվյալները քաղում է Փիրմելիանոսից ու Բարդածանից և նկատենք, որ այդ Խոսրովի մասին պատմում է բոլորովին անկախ, առանց շփոթելու ավելի ուշ գահակալած Խոսրով II-ի (կամ Խոսրով Մեծի) հետ։ Տրդատ II-ը Խոսրով I-ի որդին է և ինքը Տրդատ լինելով՝ միաժամանակ Խոսրով լինել չէր կարող։

Աղաթանգեղոսը հիշում է Տրդատ III-ի քրոջը՝ Խոսրովիդուխտ։ Դա ցույց է տալիս, որ Տրդատ III-ի հայրը իսկապես եղել է Խոսրովը և ոչ Տրդատ II-ը։ Եվ, վերջապես, Տրդատ III-ի որդին նույնպես կոչվում է Խոսրով, Կոտակ մականունով։ Այնպես որ այն վարկածը, թե Խոսրովը հայկական միջավայրում հնչել է իբրև տիտղոս կամ դարձել հոմանիշ հայոց բազավոր հասկացությանը, չի կարող ճիշտ լինել։

Իսկ Տիրա՞նը։

Եղիշեն իր պատմության առաջին եղանակն սկսում է այսպես. «Քանզի ի բառնալ ազգին Արշակունեաց տիրեցին աշխարհիս Հայոց ազգն Սասանայ պարսկի, որ վարէր զիւր իշխանութիւնն օրինօք մոգուց, և բաղում անդամ մարտնչէր ընդ այնոսիկ՝ որ ոչ ընդ նովին օրինօք մտանէին, սկիզբն արարեալ յամացն Արշակայ արքայի որդւոյն Տիրանայ և կռուէր մինչեւ յամն վեցերորդ Արտաշիսի արքայի հայոց, որդւոյն Վռամշապհոյ»[22]։ Եղիշեն նշում է Սասանյանների հալածանքների շրջանը Տիրանի որդի Արշակից մինչև Վռամշապուհի որդի Արտաշեսի վեցերորդ տարին։

Ընդգրի այս հատվածում որոշ թեռագրեր ունեն «յամացն Արշակայ արքայի որդւոյն Տիրանայ Տրդատայս ընթերցումը։ Ահա այս ընթերցման վրա է հենված Տրդատի հետ Տիրանի նույնացման վարկածը։ Բայց նույն տողն ունի և մի ուրիշ ընթերցում՝ «Տիրանայ թոռնորդւոյ Տրդատայս» իմ. «Տիրանայ» կամ «Տիրանայ-Տրդատայս։ Այստեղից է գալիս ամեն ինչ։ Նախասկզբնական ձեն այնպես է, ինչպես բնագրում՝ «յամացն Արշակայ արքայի որդւոյն Տիրանայս։ Հետագայում գրիչներից մեկը փորձել է Արշակի ծագումը խորացնել, հասցնելով մինչև Տրդատ III՝ հայ քրիստոնյա առաջին թագավորը, և Արշակը իսկապես Տրդատ III-ի թոռնորդին է։ Հետագայում մի որևէ ձեռագրում «թոռնորդի» սղվել է և ստացվել «Տիրանայ-Տրդատայս»։

Բայց և առհասարակ անմտածելի է Տիրան-Տրդատ զուգորդումը։ Եթե խոսքը վերաբերում է Արշակ II-ի հորը, որին կուրացրեց Շապուհ արքան, ապա նրա համար Տիրան-Տրդատ կապակցության մեջ պետք է ընդունել, որ տիտղոսը Տրդատն է, քանի որ և՛ Խորենացին, և՛ Փավստոս Բուզանդը Արշակի հորը Տիրան գիտեն։ Իսկ Խոսրով-Տրդատ կապակցության մեջ տիտղոս էր դիտվում Խոսրովը։ Ուրեմն և՛ «Տրդատը», և՛ «Խոսրովը» տիտղոս են։ Ստացվում է, որ Տրդատ II-ը և Տրդատ III-ը անուն չունեն, այլ միայն տիտղոս։ Տիրան և Տրդատ անունները ծագում են մեկ արմատից՝ Տիր և միանշանակ են։ Նկատի ունի Տիր աստվածությունը և պարզ է նրանց սեմանտիկան։ Այդ դեպքում անիմաստ էր նրանց դնել իրար կողքի և նշանակել մեկ անձնավորություն։

Համաձայն Բուզանդի Տրդատ III-ի եղբայրը կոչվում էր Տիրան։ Ուրեմն երկու եղբայրներ Տիրան են կոչվել։ Բայց դա անմտածելի է։ Անունները դրվում են մարդկանց տարբերակելու համար։ Ինչպե՞ս պիտի տարբերակվեին նույնանուն եղբայրները։ Տիրան թագավորի որդիներից մեկը կոչվել է Տրդատ։ Եթե Տիրանը Տրդատ է, ապա իր մականունը տվել է որդուն որպես անուն, որ նույնպես անմտածելի է։ Վերջապես նկատենք, որ Տիրան-Տրդատ զուգորդումը ծագել է Տրդատ III-ի և նրա թոռան՝ Տիրանի հետ կապված, իսկ ՀԺՊ-ում այն փոխադրվել է Տրդատ II-ին և նրանից երկու դար առաջ ապրած մի Տիրան թագավորի, որին Խորենացին ներկայացնում է Արտաշեսի որդին և Արտավազդի եղբայրը։

Այդպես, մի վարկած, որ ոչ մի հիմք չունի, հայ ժողովրդի պատմության բազմահատորյակում հիմք է դարձել III դարի պատմական իրադարձությունները և քաղաքական պատկերը

---

20 Ղ. Ալիշան. Հայապատում, էջ 188։

21 Հ. Մանանդյան. Նշվ. աշխ., էջ 58։

22 Եղիշէի վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին. Երևան, 1957, էջ 6։

ներկայացնելու համար[23]։ Տիրան և Խոսրով պատմական անունների այս վերագրումը Տրդատ II-ին ելնում է այն նախադրյալից, որ ազգային հիշողության մեջ դրանք տրոհվել են և ապահովել անկախ գոյություն։ Բայց բոլորովին հակառակը, ազգային հիշողության մեջ տեղի է ունեցել արքայանունների միավորում։ III դարի մեջ պատմությունը գրանցում է չորս թագավոր, որոնք հաջորդաբար կրում են Խոսրով և Տրդատ անունները. Խոսրով I, Տրդատ II, Խոսրով II, Տրդատ III։ Խոսրով I-ը իր գահակալումն ավարտում է 216 թ., իսկ Տրդատ III-ը՝ 330։ Այս ամբողջ ընթացքում հայ պատմական ավանդությունը գիտի մեկ Խոսրով և մեկ Տրդատ՝ Խոսրով Մեծ և Տրդատ Մեծ։ Տրդատ III-ը 27-ամյա ընդմիջումից հետո վերականգնեց Արշակունիների դինաստիան և քրիստոնեությունը հայտարարեց պետական կրոն։ Սերունդների համար դա նշանակալից էր, և մոռացման տրվեց նրա անվանակիցը՝ Տրդատ II-ը և ձուլվեց նրան, իսկ Տրդատի հայրը՝ Խոսրով II-ը, որի հետ Տրդատի ծննդի և լուսավորչի ծագման զրույցն է կապված, մթագնեց Խոսրով I-ի կերպարը և ստանձնեց միակ Խոսրովի դեր։ Այդպիսի անձնավորումները ժողովրդական հիշողության համար բնական են։ Սասանյան դինաստիայի հիմնադիր Արտաշիր I-ին հաջորդում է Շապուհ I-ը, ապա՝ Որմիզդ-Արտաշիրը, բայց հայ պատմական ավանդությունը գիտե միայն Արտաշիր I, մեկ Արտաշիր։ Շապուհ II-ի կամ երկարակյացի ազդեցությամբ նրա թոռը՝ Շապուհ III-ը դուրս է ընկնում պարսից արքայացանկից և տրվում մոռացության։ Բանավոր հիշողությունը նույն անունները փոքր ընդմիջմամբ երկար չի կարող պահպանել։ Դրանք ձուլվում են, և արքայացանկերը, եթե հենվում են ավանդության վրա, արտահայտում են նրա մոռացկոտությունը։ Պատմագիտության մեջ ջանքեր են դրվել ուղղելու և հստակելու այդ մոռացումը, իսկ «Հայ ժողովրդի պատմության» բազմահատորյակի III դարի բաժնում (հատոր II) մոռացության են տրվել այդ ջանքերը։

Վերադառնանք բանաքննությանը։

Ստեղծելով Հայաստանի բաժանման իրավիճակ, փորձ է արվում որոշելու և նրա սահմանները։ «Տիգրանակերտի հունարեն արձանագրություններից երևում է,—գրում է Ս. Տ. Երեմյանը,—որ Տիգրանակերտ և Նեկրան քաղաքները գտնվել են հռոմեական Հայաստանում՝ բաժանման սահմանագծից ոչ հեռու։ Մի այլ տեղեկություն է հաղորդում Փավստոս Բուզանդը։ Ոսխա գյուղը, որտեղ 297 թ. տեղի ունեցավ ճակատամարտը՝ հռոմեա-հայկական ուժերի և պարսիկների միջև, գտնվում էր Բասեան գավառում, որ պարսկական Հայաստանում էր և սահմանակից էր հռոմեական Հայաստանին»։ Եվ նա եզրակացնում է. «Ըստ այսմ հռոմեացիների ձեռքում էր Ծոփքը և նախկին Փոքր Հայքի հիմնական մասը կազմող Բարձր Հայքի նահանգը։ Հայաստանի մնացած մասն ըստ պայմանագրի զիջվում էր Սասանյաններին»[24]։

Այդ փաստարկները տեղին չեն և հիմք չեն տալիս նման սահմաններ գծելու։

Տիգրանակերտի հունարեն արձանագրությունից (և ոչ թե արձանագրություններից) ինչպե՞ս է երևում, որ Տիգրանակերտ և Նեկրան քաղաքները գտնվել են բաժանման սահմանագծից ոչ հեռու, հռոմեական Հայաստանում[25]։ Արձանագրության բովանդակությունից այդպիսի եզրակացության անկարելի է գալ։ Բայց եթե Տիգրանակերտը և Նեկրանը գտնվել են բաժանման սահմանագծից ոչ հեռու, նշանակում է հայտնի է բաժանման սահմանագիծը, և դրանով որոշվում է Տիգրանակերտի և Նեկրանի տեղագրությունը և ոչ թե բաժանման սահմանագիծը։ Անհայտով է որոշվում հայտնին։

Երկրորդ փաստարկը նույն բնույթն ունի։ Այո, Բուզանդը հաղորդում է, որ Ոսխա գյուղը, որտեղ տեղի է ունեցել 287 թ. ճակատամարտը, գտնվում էր Բասեն գավառում, բայց դա բաժանման սահմանները որոշելու հետ ի՞նչ կապ ունի։ Ասենք թե ճակատամարտը տեղի է ունեցել ոչ թե Բասենում, այլ Արճեշում, ի՞նչ է փոխվում դրանից։ Բայց նախադասությունը շարունակվում է. «...որ պարսկական Հայաստանում էր և սահմանակից էր հռոմեական Հայաստանին»։ Դա այլ խնդիր է։ Բայց Բուզանդը նման բան չի ասում, նա միայն տեղեկացնում է, որ ճակատամարտը տեղի է ունեցել Բասեն գավառում և ուրիշ ոչինչ։ Եթե հեղինակը ուզում է ասել, թե Բուզանդն է վկայում, որ Բասեն գավառը գտնվում էր պարսկական Հայաստանում և սահմանակից էր հռոմեական Հայաստանին, ապա այստեղ մենք գործ ունենք անթույլատրելի

---

23 Բայց այդ ամենից անկախ Տիրանի Ջրմեսում բնակվելու փաստը ոչինչ չի ասում։ Խորենացին չի վկայում Տիրանի ժամանակ Հայաստանի բաժանման մասին, երբ էլ որ նա գահակալած լինի և որտեղ էլ լինի նրա արքունիքը։

24 ՀԺՊ, էջ 36։

25 C. F. Lehmann-Haupt. Armenien einst und jetzt. Berlin, 1910, S. 11—419.

արարքի հետ։ Պատմիչի անունով շրջանառության մեջ է դրվում կեղծ փաստ։ Բայց դրանից անկախ, եթե Բասեն գավառը «գտնվում է պարսկական Հայաստանում և սահմանակից է հռոմեական Հայաստանին», նշանակում է պարդ են պարսկական և հռոմեական Հայաստանների սահմանները և դրանով որոշվում է Բասեն գավառի տեղադրությունը։ Դարձյալ հայտնին որոշվեց անհայտով։

Այս երկու փաստարկները արտահայտում են որոշակի մեթոդ և ներքին մեխանիզմ։ Տիգրանակերտ, Նեկրան, 287 թ. ճակատամարտ, Բասեն գավառ, հունարեն արձանագրություն, Փամստոս Բուզանդ,—առաջացնում են մի տեսակ փաստագրական տրամադրություն և իրացվում է հորինվածքը։

Պատմարանը երկրորդ անգամ է անդրադառնում արևմտյան և արևելյան Հայաստանի սահմանագծի խնդրին և ավելացնում մի մանրամասնություն. «Իբրև ձեռական աշխարհ թագաւորին Հայոց» հռոմեական Հայաստանի կազմի մեջ պետք է մտներ նաև Միջագետքի Գիմաթենե գավառը՝ վաղարշակուպոլիս կենտրոնով»[26]։ Ինչո՞ւ պետք է Գիմաթենե գավառը մտներ հռոմեական Հայաստանի կազմի մեջ,—դժվար է հասկանալ, իբրև «ձեռական աշխարհ թագաւորին Հայո՛ց», բայց նա այդպես կարող էր մտնել և պարսկական Հայաստանի կազմի մեջ։ Նախադասությունը ծանոթագրված է, կարդում ես, հուսալով, որ այնտեղ որևէ լրացուցիչ տվյալ կարող ես գտնել, որևէ աղբյուր, որի հիման վրա հեղինակը հանգել է այդպիսի եզրակացության։ Բայց ծանոթագրության մեջ գրված է. «Գավառը հայտնի էր իր ջերմուկներով, ուստի հայերը միշտ դարերուս այն կոչում էին Ջերմուկ (այժմյան Ջիրմիկ)։ Այն գտնվում էր Ամիդ-Դիարբեքիրից արևմուտք»[27]։ Ինչի՞ համար է այդ ծանոթագրությունը։ Եթե գավառը հայտնի էր իր ջերմուկներով, դա որևէ ձևով ապացուցո՛ւմ է, որ այն պատկանում էր հռոմեական Հայաստանին։

Բերենք փաստերի խեղման և փաստի ու հետևության անհամաձայնության ևս մի օրինակ. Անակի Հայաստան գալու ժամանակը ճշտիվ որոշում է Խորենացին։ Նա գրում է. «Անակի Հայաստան գալուց երկու տարի անցած՝ երրորդում սպանում է Խոսրովին»[28]։ Երբ Խորենացին հաղորդում է, թե Անակը Հայաստան գալուց երկու տարի հետո սպանում է Խոսրովին, դժվար է հասկանալ, ինչպես է նա դրանով ճշտիվ որոշում Անակի Հայաստան գալու ժամանակը։ Այստեղ միայն ասված է, որ Անակը Հայաստան գալուց երկու տարի հետո սպանում է Խոսրովին, այսինքն պարզ է Անակի Հայաստանում լինելու ժամանակը, և ոչ թե գալու[29]։ Բայց բերելով այդ բառվածքը հեղինակը եզրակացնում է. «Ուրեմն Անակը Հայաստան էր եկել այն ժամանակ, երբ Հռոմը ճանաչեց Մեծ Հայքի թագավորության բաժանումը երկու աշխարհակալությունների միջև և «Խոսրով Մեծ» Տրդատ Բ-ն անցել էր իր արքունիքով հռոմեական Հայաստան, այսինքն 253 թ.»[30]։ Ուղղակի մնում ես զարմացած, մի՞թե կարելի է այդպիսի եզրակացություն անել, երբ Խորենացին ընդամենը ասել է, թե Անակը Հայաստան գալուց երկու տարի հետո, երրորդում սպանում է Խոսրովին։

Այս եզրակացության մեջ երկու կետ կա. Անակը Հայաստան է եկել 253 թ., երբ Հռոմը ճանաչել է Մեծ Հայքի բաժանումը երկու աշխարհակալությունների միջև (ա), Խոսրով Մեծ-Տրդատ II-ը իր արքունիքով անցել էր հռոմեական Հայաստան (բ)։ Երկրորդ կետի մասին մենք արդեն խոսել ենք, թե ինչպես Տիրան-Տրդատ հորինվածքով նա Տրդատին տեղափոխում է Ջրմես։ Իսկ ինչ վերաբերում է առաջին կետին, ապա չկա այնպիսի փաստ կամ թեկուզ մոտավոր տվյալ, որից երևար, թե Հռոմը ճանաչեց Մեծ Հայքի բաժանումը 253 թ.։ Եթե 253 թ., ուրեմն Գալլոս կայսեր ժամանակ։ Մի այլ անգամ նա ուղղակի գրում է. «Գալլոս կայսրը ճանաչել էր Հայաստանի բաժանումը երկու մասի»[31]։ Աղբյուրն ասում է. «Սրա ժամանակ (Գալլոսի—Ա. Մ.) պարսիկները սկսեցին աշխուժանալ, որ եկան գրավեցին Հայաստանը, որտեղից

---

26 ՀԺՊ, էջ 43։

27 ՀԺՊ, էջ 46։

28 ՀԺՊ, էջ 44։

29 Ըստ Ագաթանգեղոսի Անակը Հայաստան է եկել ձմեռը, և գարնան սկզբին, ձնհալի ժամանակ սպանել է Խոսրովին, այսինքն մի ձմեռ հյուրընկալվելուց հետո միայն և ոչ թե երրորդ տարում (Ագաթանգեղոս, բ, 28—33)։

30 ՀԺՊ, էջ 44։

31 ՀԺՊ, էջ 44։

Տրդատ արքան փախավ, իսկ նրա որդիները անցան պարսից կողմը»[32]։ Այս վկայությունը նկատի ունի Ս. Տ. Երեմյանը։ Բայց այստեղից կարելի է եզրակացնել, որ հայոց թագավոր Տրդատի և նրա որդիների միջև ինչ-որ հակասություն է եղել, որ պարսիկները խարդավանքով գրավել են Հայաստանը, բայց ոչ երբեք՝ որ Հայաստանը բաժանվել է երկու մասի և Գալլոս կայսրը ճանաչել է Հայաստանի բաժանումը։ Այստեղ էլ մենք վկա ենք փաստի և հետևության զարմանալի անհամաձայնության։

Վերադառնանք Խոսրովի սպանության հանգամանքներին։

Ինչպես տեսանք Ս. Տ. Երեմյանը գտնում է, որ Անակը Հայաստան է եկել այն ժամանակ, երբ Մեծ Հայքը բաժանվել էր երկու մասի, և Խոսրովն իր արքունիքը տեղափոխել էր Հռոմեական Հայաստան, Ջրմես ավանը։ Ուրեմն այնտեղ է Անակը հանդիպել Խոսրովին և կատարել իր սև գործը։ Բայց տեսնենք, թե ինչ են ասում աղբյուրները՝ Ագաթանգեղոսը և Խորենացին։

Ագաթանգեղոսը գրում է, թե Անակը իբր «ապստամբեալ իջէ յարքայէն պարսից», գալիս է Խոսրով թագավորի մոտ՝ Ուտիք. «Եկալ յանդիման եղև թագաւորին Խոսրովու յՈւտի գաւառի, ի Խաղխաղ քաղաքի, ի ձմերոց արքայութեանն Հայոց»[33]։ Նրանք միասին են անցկացնում ձմեռը և գարնան սկզբին գնում մայրաքաղաք. «Եկին իջին յԱյրարատ գաւառ, ի Վաղարշապատ քաղաք»։ Ահա այստեղ, զբոսանքի ժամանակ Անակր իր եղբոր հետ սպանում է Խոսրովին։ Նախարարները հետապնդում են նրան և Տափերական կամրջից գետը նետում[34]։

Խորենացին մի փոքր այլ կերպ է պատմում, բայց նույն աշխարհագրական միջավայրն է. «Լուեալ մեծին Խոսրովայ յՈւտէացւոց գաւառին իբր զԿարենեանցն կարծեցեալ եկաւորութիւն՝ գունդ առաքէ յօգնականութիւն Անակայ։ Որոց պատահեալ Անակայ՝ ածեն զնա հրամանաւ թագաւորին ի գաւառն, որ անուանեալ կոչի Արտազ»[35]։ Եթե աղբյուրներն այսքան հստակ տեղեկություններ են հաղորդում Անակի Հայաստան գալու, Խոսրովի սպանության հանգամանքների մասին, ինչպե՞ս է հնարավոր գրել, թե Անակը Հայաստան է եկել այն ժամանակ, երբ Մեծ Հայքը բաժանվել էր երկու մասի, և Խոսրովն իր արքունիքը տեղափոխել էր Հռոմեական Հայաստան, Ջրմես ավանը, ուր և նրան հանդիպել է Անակր, և այս ամենի համար վկայաբերել Խորենացուն։ Թվում է, թե նման պայմաններում ավելի հեշտ էր Ջրմես ավանը կամ Եկեղյաց գավառը տեղափոխել Ուտիք կամ Արարատյան դաշտ։

Պատմիչների այս տվյալները նորից վկայում են, թե որքան անիմաստ է այդ ժամանակի համար Հայաստանի բաժանման վարկածը. Խոսրովը իր կյանքն ավարտել է Վաղարշապատում՝ իբրև Մեծ Հայքի թագավոր, և նա Տիրան չէ և ոչ Տրդատ II։

Քանի որ խոսքը վերաբերում է Հայաստանի բաժանմանը և դրա փաստարկումներին, բերենք մի օրինակ ևս։ «Ըստ Ագաթանգեղոսի,— գրում է պատմաբանը,— Հռոմեական Հայաստանը դիտվում էր իբրև «դաստակերտ կայսերաց»[36]։

Կամ՝ «Քանի որ Հայաստանի Հռոմին անցած մասը կայսրության վարչական բաժանման համակարգի մեջ էր, ուստի Ագաթանգեղոսն այն համարում էր «դաստակերտ կայսերաց»[37]։

Ուրեմն Ագաթանգեղոսը գիտի բաժանման իրողությունը և նշել է, թե այդ ստատուսը կամ իրավիճակը հռոմեական կողմի համար ինչ տերմինով է արտահայտվում՝ «դաստակերտ կայսերաց»։

---

32 Zonaras, XII, 21.

33 Ագաթանգեղոս, Բ, 29։

34 «Իսկ իբրև զայն գիտացին նախարարք հայակոյտ զօրացն՝ գունդ-գունդ հասանէին, զկնի լինէին, ոմանք ընդ ցամաքն աճապարեալ, հասանել ի խելս կամրջացն առ դրունս Արտաշատ քաղաքի։ Զի գետն Երասխ յարուցեալ գայր լի դարիւ և դարիւ, սառնահալ, ջրակուտակ, ձիմասոյզ, ձինախաղաղ բազմութեամբն յաւուրս իւրոյ պղտորութեանն։ Կէսքն անցեալ ընդ կամուրջն Վաղարշապատ քաղաքի, զոր և կամուրջ Մեծամօրի կոչեն՝ աճապարէին հասանել յառաջ մի ի խելս կամրջին Արտաշատու։ Ի կիրճն ճանապարհացն արգելին զնոսա, ի մէջ արարեալ զնոսա՝ ի Տափերական կամրջացն գլտավէժ առնէին զնոսա» (Ագաթանգեղոս, Բ, 33)։

35 Խորենացի, Բ, հզ։

36 ՀԺՊ, էջ 36։

37 ՀԺՊ, էջ 43։

Բայց դիմենք աղբյուրին։ Ագաթանգեղոսը պատմում է, թե ինչպես Մեծ Հայքի թագավոր Տրդատը իր բանակով գալիս է Եկեղյաց գավառ, որպեսզի զոհ մատուցի Անահիտ աստվածուհուն. «Յառաջին ամին Տրդատայ արքայութեանն Հայոց Մեծաց խաղացին եկին հասին յԵկեղեաց գաւառ ի գեւղն Երիզայ ի մեհեանն Անահտական, զի անդ զոհս մատուսցեն»[38]։ Այդտեղ Գրիգոր Պարթևը հրաժարվում է զոհաբերությունից, որի պատճառով Տրդատը պատժում է նրան, հրամայում է տանել Արտաշատ և գցել Խորվիրապ. «Հրաման տայր... խաղացուցանել զնա յԱյրարատ գաւառ և տալ զնա ի դղեակ բերդին Արտաշատ քաղաքի և իջուցանել ի վիրապն ներքին»[39]։ Իսկ Տրդատը վերադառնում է Վաղարշապատ. «Եւ ինքն իսկ թագաւորն խաղայր գնայր ի ձմերոց յԱյրարատ գաւառ, ի Վաղարշապատ քաղաք, ի Հայոց աշխարհ յարեւելս»[40]։ Տրդատի երթուղու մի ծայրում Եկեղյաց գավառն է, Երիզա գյուղը, իսկ հենց այդտեղ է գտնվում Զրմես ավանը, Երիզայից ոչ հեռու, մյուս ծայրում՝ Այրարատ գավառն է, Վաղարշապատ քաղաքը։ Տրդատը գնացել էր Արշակունյաց տոհմական սրբավայրը զոհ մատուցելու և վերադարձել իր նստավայրը՝ Վաղարշապատ։ Դա ամբողջություն է՝ Մեծ Հայք և Տրդատ՝ Մեծ Հայքի թագավոր՝ «արքայ Հայոց Մեծաց»։

Ինչպես տեսնում ենք Ագաթանգեղոսը բաժանված Հայաստան չգիտի, և այս փաստը բավական է, որպեսզի կանխվեր Մեծ Հայքի բաժանման՝ արևելյան՝ պարսկական և արևմտյան՝ հռոմեական Հայաստանների վարկածը, բայց զարմանալիորեն այստեղ էլ առիթ է գտնվել այդ վարկածը սնուցելու։

Տրդատը, Անահիտի սրբավայրից վերադառնալուց անմիջապես հետո, Գրիգոր Պարթևի արարքից վրդովված, հրովարտակ է արձակում և պահանջում հավատարիմ մնալ հին ու հայրենի աստվածներին։ «Տրդատ արքայ Հայոց Մեծաց, առ մեծամեծս և առ իշխանս... Ողջոյն հասեալ է շինութիւն գիցն օգնականութեամբ, լիութիւն պարարտութեան յարոյն Արամազդայ, խնամակալութիւն յԱնահիտ տիկնոջէ և քաջութիւն հասցէ ձեզ ի քաջէն Վահագնէ ամենայն Հայոց աշխարհիս, իմաստութիւն Յունաց հասցէ դաստակերտիդ կայսերաց, *և ի մեր դիւցախառն Պարթևաց հասցէ այցելութիւն, ի փառաց թագաւորաց և ի քաջ նախնեաց»[41]։ Այս կապակցության մեջ է «դաստակերտիդ կայսերաց» արտահայտությունը, որին պատմաբանը հատուկ շեշտադրություն է հաղորդել։ Բայց այստեղ դա արքայի կողմից հարգանքի տուրք է Հռոմին, որի օգնությամբ նա գահ բարձրացավ կամ, թերևս, արտահայտում է կախվածություն, բայց ոչ մի դեպքում ցույց չի տալիս բաժանման իրավիճակ։*

Ս. Երեմյանի կողմից գահակալների և իրադարձությունների տարիները ոչ թե արտածվում են, այլ ուղղակի հարմարեցվում բաժանմանը, և ստացվում է թվագրական շփոթ։ Այսպես, Խորենացին Սասանյանների տիրապետությունը Հայաստանում կոչում է «ժամանակս անիշխանութեան» և հաշվում 27 տարի[42]։ Ս. Տ. Երեմյանը իր հոդվածում համարում է 50 և վերագրում Խորենացուն. «Այս մոտ 50 տարվա (237—287) ժամանակաշրջանը,—գրում է նա,—Մովսես Խորենացին դիտում է իբրև «ժամանակս անիշխանութեանն»[43], իսկ ՀԺՊ-ի մեջ նույն «ժամանակս անիշխանութեանը» նա հաշվում է 32 տարի, այս անգամ նշելով նաև Խորենացու թիվը, բայց ոչ թե 27, այլ՝ 26[44]։

Ինչպե՞ս ստացվեց մեկ տարվա այդ վրիպումը։ Խորենացին Արտաշիր Սասանյանի մասին գրում է. «Եւ կալաւ զաշխարհս մեր որպէս զմի յաշխարհացն իւրոց պարսիկ գործակալօք, ամս քսան և վեց, և յետ նորա որդի նորին, որ անուանեցաւ Շապուհ, որ լսի Արքայմանուկ, ցթագաւորելն Տրդատայ ամ մի»[45]։ Քսանվեց տարի կառավարել է Արտաշիր Սասանյանը իր գործակալներով և նրանից հետո մեկ տարի՝ նրա որդին, մինչև Տրդատի թագավորելը։ Անիշխա-

---

38 *Ագաթանգեղոս, Լ, 48։*

39 *Ագաթանգեղոս, ԺԱ, 122։*

40 *Նույն տեղում։*

41 *Ագաթանգեղոս, ԺԲ, 126—127։*

42 *Խորենացու տվյալը պատմականորեն ճիշտ է և հաստատվում է այլ աղբյուրներով, հատկապես SKZ արձանագրությամբ (տե՛ս Ա. Մարտիրոսյան. Հայաստանը և առաջին Սասանյանները.—ՊԲՀ, 1975, № 3, էջ 154—156։*

43 *ՊԲՀ, 1966, № 2, էջ 60։*

44 *Առաջին դեպքում Անիշխանության շրջանը Ս. Տ. Երեմյանը տեղադրում է 237—287 թթ. միջև, երկրորդ դեպքում՝ 261—293 և երկու դեպքում էլ ճիշտ չէ։*

45 *Մովսես Խորենացի, Բ, հէ։*

նության շրջանը ստացվում է 27։ Պատմաբանը վրիպել է Շապուհի թագավորության այդ մեկ տարին[46]։ Թերևս դրան ուշադրություն չդարձնեինք, բայց այն չի անցել անտեղի։ Ս. Տ. Երեմյանը հաջողությամբ օգտվում է սեփական վրիպումից՝ փաստարկելու իր բաժանման վարկածը։ «Ինչպես երևում է Խորենացին «ժամանակ անիշխանութեան» կամ «ամք անիշխանութեան» էր համարում այն 26 տարի կազմող ժամանակահատվածը, որ սկսվում էր Արտավազդ Ե-ի գահընկեցությունից հետո, երբ 261 թ. պարսկական Հայաստանում գահ բարձրացավ Որմիզդ Արտաշիրն իբրև Հայաստանի մեծ թագավոր, մինչև Տրդատ Դ. Արշակունու գահակալության վերջնական ճանաչումը հռոմեական Հայաստանում (287),—գրում է պատմաբանը։—Այս 26 տարին, որ ամբողջ Հայաստանի վրա հայ Արշակունիների իշխանության ընդհատման տարիներն են, չպետք է շփոթել այն 27 տարվա («Խոսրով սպանաւ յԱնակայ և անիշխան մնաց աշխարհս Հայոց զամս Իէ»,—Սամուէլի քահանայի Անեցւոյ «Հաւաքմունք ի գրոց պատմագրաց» Վաղարշապատ, 1893, էջ 61) հետ, որ ընդգրկում է 256—283 թվականները։ Դրանք բռնագրաված հռոմեական Հայաստանի Սասանյանների ապօրինի իշխանության տարիներն են։ Այսպիսով, պարսկական տիրապետությունը Հայաստանի մեծագույն մասում տևել է 261—293 թթ., այսինքն՝ 32 տարի»[47]։

26 և 27 թվերի մասին այդ դատողությունները, որ իբր մեկը վերաբերում է ամբողջ Հայաստանի հայ Արշակունիների իշխանության ընդհատմանը, մյուսը՝ պարսից կողմից բռնագրաված հռոմեական Հայաստանի ապօրինի իշխանությանը, ոչ մի իմաստ չունեն։ Ե՛վ Սամուել Անեցին, և՛ Ս. Տ. Երեմյանը այդ թվերը վերցրել են Խորենացուց, միայն Սամուել Անեցին ճիշտ է կարդացել բնագիրը։

Այդ սխալի մեջ էլ սխալ կա։ Ինչո՞ւ Խորենացու թիվը վերաբերում է ամբողջ Հայաստանի հայ Արշակունի իշխանության ընդհատմանը, իսկ Սամուել Անեցունը՝ միայն հռոմեական Հայաստանին, երբ ժամանակները գրեթե համընկնում են՝ 261—287 և 256—283։ Կարելի՞ է մտածել, որ Սամուել Անեցին հռոմեական Հայաստանի պատմիչ է։ Դա հայտնություն կլիներ և ապացուցվում է, որ Սամուել Անեցին անիշխանության ժամանակ է համարել պարսից կողմից հռոմեական Հայաստանի ապօրինի տիրապետության շրջանը, ուրեմն հռոմեական իշխանությունը նա դիտում է օրինական։ Մի՞թե այդպես է կարծում Ս. Տ. Երեմյանը։

Բայց ամենից ավելի տարօրինակ է պարբերության ամփոփումը՝ «Այսպիսով պարսկական տիրապետությունը Հայաստանի մեծագույն մասում տևել է 261—293 թ., այսինքն՝ 32 տարի»։ Ուղղակի դժվար է հասկանալ։ Խոսքը գնում էր Խորենացու 26 և Սամուել Անեցու 27 տարի տևող անիշխանության շրջանների մասին, որ իբր չպետք է շփոթել, որ մեկը վերաբերում է ամբողջ, մյուսը՝ հռոմեական Հայաստանին, և հանկարծ նման եզրակացություն։ Ի՞նչ հնարով կարելի է 26 և 27 թվերի զուգորդմամբ ստանալ 32։ Փաստարկն ու եզրահանգումը այստեղ էլ ելնում են իրար դեմ, ո՛չ, ուղղակի իրար հետ որևէ կապ չունեն։

Ժամանակագրական անճշտությունները դրանով չեն սպառվում։

«Ագաթանգեղոսը վկայում է,—գրում է Ս. Տ. Երեմյանը,—որ Խոսրովի պատերազմները Սասանյանների դեմ տևել են 11 տարի (245—256), որը և համապատասխանում է պատմական իրականությանը»[48]։ Այնպես է գրված, կարծես պայքարի 11 տարիները Ագաթանգեղոսն է տեղադրել 245—256 թ. միջև։ Ագաթանգեղոսի վկայությունը, սակայն, այդ թվականների և, նույնիսկ, այդ շրջանի հետ կապ չունի. նա գրում է, որ Խոսրովը Արտաշիրի դեմ դուրս եկավ նրա իշխանության երկրորդ տարին, ուրեմն՝ 227 թ., եթե Սասանյանների իշխանությունը սկսվում է 226 թ.։ Նշանակում է 11 տարին ընդգրկվում է 227—238 թթ. մեջ։ Պատմաբանը, սակայն, բերում է և այդ տվյալը, որ Խոսրովը Սասանյանների դեմ պայքար է սկսել Արտաշիրի իշխանության երկրորդ տարում։ Բայց Անակի կողմից սպանվել է 256 թ.[49]։ Իսկ այդ դեպքում պայքարի տարիները լինում են ոչ թե 11, այլ՝ 29 (227—256)։

---

46 Հետաքրքիր է, որ գրքի մի այլ էջում նա առանձին հիշատակում է Շապուհի մեկտարյա թագավորության մասին, Խորենացուց բառացի բերում քաղվածքը և համաձայնում նրա հետ (տե՛ս ՀԺՊ, էջ 59—60), մի այլ տեղ և նույն գրքում նա Շապուհի թագավորելը հաշվում է երեք տարի՝ 273—276 (ՀԺՊ, էջ 49)։

47 ՀԺՊ, էջ 64։

48 ՀԺՊ, էջ 37։

49 ՀԺՊ, էջ 25, 44։

Բայց Խոսրովի ժամանակագրական դեգերումները դրանով չեն ավարտվում; ինչպես և՝ ժամանակագրական մահերը։ Համաձայն Ս. Տ. Երեմյանի Խոսրովը Անակի ձեռքով նախ սպանվում է 237 թ.[50] ապա՝ Հայաստանի հռոմեական մասում գահակալում է 273—287 թթ.[51] և վերջապես՝ Խոսրով Մեծ-Տիրան-Տրդատը սպանվում 256 թ.[52]։

Աններեր չեն և Տրդատ III-ի գահակալության տարիները։ Առաջին անգամ Տրդատը թագավոր է հանձնվում կամ թագավորում է նախ՝ 245—252 թթ., ապա՝ Մեծ Հայքի հռոմեական մասում՝ 287 թ. և ամբողջ Հայաստանում՝ 298 թ.[53]։ Երկրորդ անգամ՝ 274 թ., 276 թ., 282—283 թ., 287 թ. և ամբողջ Հայաստանում՝ 293 թ.[54]։

Խոսրով Մեծ-Տիրան-Տրդատ II-ը 253 թ. հռոմեական Հայաստան տեղափոխվելուց հետո, ՀԺՊ-ի համաձայն, պարսկական Հայաստանի թագավոր է կարգվում Արտավազդ V-ը։ Այդպիսի թագավոր հայ պատմիչները չգիտեն։ Այն չի ընդունված և պատմագիտության մեջ։ Դա Արտավազդ Մանդակունին է, որ Տրդատ III-ի խնամակալն էր և Խոսրովի սպանությունից հետո մինչև պարսիկների ներխուժումը իր սանի՝ Տրդատ III-ի անունից կառավարում էր երկիրը։ Մենք առիթ ենք ունեցել քննելու այդ խնդիրը և այստեղ վերստին անդրադառնալու հարկ չկա[55]։ Բայց տեսնենք, թե ինչպես է Ս. Տ. Երեմյանը հաստատում նրա ինքնությունը։

Առաջին անդամ պատմաբանը համաձայնվում է այն կարծիքի հետ, որ Արտավազդը հայ Արշակունիների տոհմից չէր, և խոսքը վերաբերում է Արտավազդ Մանդակունուն։ «Ստորև կտեսնենք,—գրում է նա,—որ այդ ենթադրությունը հավանական է դառնում Res gestae-ի տվյալների լույսի տակ»[56]։ Երկրորդ անգամ նա հրաժարվում է այդ մտքից. «Գերիշխող է այն կարծիքը, որ այս Արտավազդ V-ը Արշակունի դինաստիայից չի եղել և թերևս նույն Արտավազդ Մանդակունին է, որ ճիշտ չպետք է լինի»[57]։ Երրորդ անգամ Ս. Տ. Երեմյանը Արտավազդին համարում է «Տրդատ II-ի որդիներից մեկը, կամ նրա եղբայրը»[58]։ Իսկ չորրորդ անգամ, ՀԺՊ-ի էջերում, նա վերադառնում է երկրորդ տարբերակին. Արտավազդ V-ը «Արշակունի դինաստիայից էր և տարագիր Տրդատ II-ի ազգականներից՝ Արշակունի սեպուհներից մեկը»[59]։

Իհարկե, պատմաբանը կարող է նույն խնդրի շուրջ տարբեր կարծիքներ հայտնել, բայց եթե դրա համար ունի որևէ հիմք կամ տվյալ։ Ս. Տ. Երեմյանը այդ բոլոր դեպքերում, չնայած հավաստիացումներին, ոչ մի փաստարկ չի բերում։ Դա անշուշտ արտահայտում է հայեցակետի բացակայություն և ոչ թե ճշմարտության ձգտում։

«Գահակալելուց» հետո Արտավազդ V-ը ձեռք է բերում և կենսագրություն։ Պարզվում է, որ նորենացին նրան շփոթել է Արտաշես I-ի[60] որդի Արտավազդի հետ, որ իր ազգական Տիրան-Տրդատ թագավորից դժգոհ, հռոմեական Հայաստանի Հաշտյանք գավառից տեղափոխվել է պարսկական Հայաստան։ Նա հակառակորդն է «Հայաստանի հռոմեական մասն անցած իր ազգական «Խոսրով Մեծ-Տրդատ Բ-ի» ու նրա ընտանիքի, առաջին հերթին վերջինիս որդու՝ մանկահաս Տրդատի»։ Նա «իրրև վասալ իր այրուձիով պարսկական զորամասերի հետ մասնակցում էր Հռոմեական կայսրության դեմ մղվող պատերազմներին» և հավանաբար գլխատվել է իրրև պետական դավաճան[61]։ Այս ամենը պարզ հորինվածք է։ Վաղուց ապրած՝ Արտաշես II-ի որդի Արտավազդը բռնի անձնավորել է III դարի Արտավազդ Մանդակունուն և «մանկահաս Տրդատի» խնամակալն ու փրկիչը դարձել է «մանկահաս Տրդատի հակառակորդ»։

Հետևաբար, թվում է, հենց այնպես, իմիջիայլոց բերում է «Արտավազդ V-ի» տիտղոսները. «աւագ սեպուհ», «Մեծ թագաւորն Հայոց», «Մեծ արքայ Հայոց» այնպիսի կապակցությունների

---

50 ՊԲՀ, 1966, № 2, էջ 68։

51 ՊԲՀ, 1976, № 1, էջ 81։

52 ՀԺՊ, էջ 44։

53 ՊԲՀ, 1966, № 2, էջ 69։

54 ՀԺՊ, էջ 60—62, 64։

55 Տե՛ս Ա. Ա. Մարտիրոսյան. Հայաստանը և առաջին Սասանյանները, էջ 153—154։

56 ՊԲՀ, 1966, № 2, էջ 63։

57 ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. դիտ.», 1975, № 1, էջ 14։

58 ՊԲՀ, 1976, № 1, էջ 81։

59 ՀԺՊ, էջ 41։

60 Պետք է լինի Արտաշես II։ Ս. Տ. Երեմյանը Արտաշես II-ի որդի Արտավազդի գործողություններն է վերագրում Արտավազդ V-ին, բայց շփոթում Արտաշես I-ի հետ։

61 ՀԺՊ, էջ 42—43, 52։

մեջ, գրարար և չակերտներով, որ պատարանք է ստեղծվում, թե դրանք քաղված են աղբյուրներից[62], Բայց աղբյուրներում, կրկնում ենք, Արտավազդ V-ի մասին խոսք չկա, բացի Տրդատ-ի մեջ Պոլիոնի սր արտահայտությունից, որ սոսկ գրական ոճավորում է։

Այժմ բերենք ՀԺՊ-ի մեջ Արտաշես II-ի որդի Արտավազդի կերպափոխման մի երկրորդ տարբերակ։ Խորենացին, քաղելով Գողթան երգիչներից, պատմում է. որ երբ Արտաշեսը մահացավ, կռուորածներ եղան։ Արտավազդը դժգոհեց և ասաց. «Մին՝ դու գնացեր, և զերկիրս ամենայն ընդ քեզ տարար, ես աւարակացս ո՞ւմ թագաւորեմ»։ Արտաշեսն այդ խոսքի համար անիծում է նրան և ասում. «Սրդ՝ դու յորս հեծցիս յԱզատն ի վեր ի Մասիս, գքեզ կալցին քաջք, տարցին յԱզատն ի վեր ի Մասիս, անդ կայցես և զլոյս սր տեսցես»։ Ապա տարեց մարդիկ զրուցում են, շարունակում է Խորենացին, թե Արտավազդն արգելված մնում է քարանձավում երկաթյա շղթաներով կապված։ Երկու շուն կրծում են շղթաները, իսկ նա ամեն կերպ ուզում է դուրս գալ և վերջ տալ աշխարհին։ Բայց դարբինների կռանահարության ձայնից շղթաները ամրանում են[63]։

«Շղթայակապ Արտավազդն արտացոլումն է վերջին պարթև Արշակունի գահակալ Արտավազդի», — անսպասելի հավաստիացնում է Ս. Տ. Երեմյանը[64]։ Բայց եթե հարց տրվի՝ ինչո՞ւ, պատասխան չի լինի։ Նախ՝ Արտավազդը վերջին պարթև Արշակունի գահակալը չէ, վերջինը Արտավանն է. նրա հաջորդ։ Արտավազդը չհասցրեց գահակալել և փախավ Մեգիա, և ապա՝ անհասկանալի է, ինչպե՞ս պատահեց, որ հայ դիցարանական-հավատալիքային սյուժեն հյուսվեց պարթև Արտավազդի վրա, որի դերը չափազանց աննշան է և հանգամանքային և չէր կարող հիշողության մեջ հետք թողնել։ Ինչն է թելադրել պատմարանին այդ գեղեցիկ զրույցը պոկել աղգային հողից։

Երևս բավական է։

Մնում է զարմանալ, ինչի՞ց են գալիս այս սխալները և ինչո՞ւ է առաջ քաշվել 244—253 թթ. Մեծ Հայքի բաժանման վարկածը, եթե աղբյուրները նույնիսկ ինչին առիթ չեն տալիս, մինչդեռ դրանով ազավաղվում է III դարի հայոց պատմությունը։ Արշակունիները Հայաստանում ազգալնացան III դարում։ Մին՝ այդ նրանք գինաստիական իշխողներ էին, և եթե III դարում Հայաստանը բաժանված էր երկու աշխարհակալ տերությունների միջև, նշանակում է Արշակունիների շրջանում չկար ընդհանուր ազգային պետականություն։ Բայց այդ եզրակացությունը լունի գիտական ոչ մի հիմք։ Ինչո՞ւ արհեստականորեն ազգատացնել հայոց պատմությունը։

ГИПОТЕЗА О РАЗДЕЛЕ ВЕЛИКОЙ АРМЕНИИ В III ВЕКЕ

Доктор филол. наук А. А. МАРТИРОСЯН

Резюме

О разделе единого царства Великой Армении была выдвинута новая гипотеза, согласно которой раздел Армении между Персией и Римом впервые имел место в 244 году, а не в 387 году. Эта же мысль отражена во втором томе академического издания «Истории армянского народа». В статье рассматривается вопрос раздела Армении. Автор полагает, что для обоснования этой гипотезы не приводится ни одного аргумента. В 244 г. акт раздела Армении не имел места.

---

62 ՀԺՊ, էջ 41, 43։ Հեղինակը բերելով SKZ արձանագրությունից Որմիզդ-Արտաշրի տիտղոսը՝ «Արմենիայի մեծ թագավոր», ծանոթագրում է. «Հմմտ. հայ մատենագրությունից հայտնի «թագաւոր Հայոց Մեծաց», կամ «արքայ Հայոց Մեծաց, ամենայն հետ» (ՀԺՊ, էջ 40)։ Բայց դրանք նույնիմաստ չեն։ «Թագաւոր Հայոց Մեծաց» նաև «արքայ Հայոց Մեծաց» նշանակում է Մեծ Հայքի թագավոր և ոչ թե Արմենիայի կամ Հայաստանի մեծ թագավոր, որ հոմանիշ է Արտավազդ II-ին վերագրված տիտղոսներին։ Բոլորովին այլ խնդիր է, թե որքան է ճիշտ կարդացվում SKZ արձանագրությունը։

63 Մ ո ս ե ս Խ ո ր ե ն ա ց ի, Բ, կա։

64 ՀԺՊ, էջ 31։